ԿՈՄ.

ԲՈԼՈՐ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ,

ՏՆՏԵՍԱԿԱՆ,

ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ

ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄԸ ՅԵՎ ՎԵՑԵԵՍՊԵԵՍԻ ՈՒ ԼԵՆԻՆԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

338.98
Բ-81

ՄՈՍԿՎԱ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
1930

338.98 Բ-81 05 MAR 2013 31926 2802-10

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆԻՑ

Ստորև տպագրում ենք Կուսակցության Կենտկոմի դիմումը ճեղքվածքների լիկվիդացիայի և հնգամյակի յերրորդ տարվա խնդիրների մասին, և Համ. Լենկոմյերիտմիության ու Համ. Պրոֆ. Միությունների Կենտխորհի վորոշումը՝ այդ դիմումի առթիվ, վորին բանվոր դասակարգը դիմավորեց ստեղծագործական վերելքի հուժկու ալիքով։

Այդ դիմումները, վորոնք ամենից առաջ արդյունք են ընթացիկ տնտեսական տարվա արտադրական ճեղքվածքների, — հսկայական պատմական նշանակություն ունեն. Նրանք խոշոր դեր են խաղալու և արդեն խաղում են հնգամյակի յերրորդ տարվա վիթխարի ծրագիրը կատարելու գործում, վորը վճռական նշանակություն ունի հնգամյակը չորս տարում իրականացնելու համար։

Հնգամյակի յերրորդ տարվա վիթխարի ծրագրի իրականացումը հնարավոր է միայն ամբողջ բանվոր դասակարգի, բոլոր կուսակցական, կոմյերիտական կազմակերպությունների ամենաակտիվ և դրա հետ մեկտեղ ամենաարագ մոբիլիզացիայով։ Տնտեսական և պրոֆմիութենական կազմակերպությունների, ինչպես և ամբողջ կոմսոմոլի կողմից, պահանջվում է ամենախիստ շրջադարձ «յերեսով դեպի արտադրությունը», և բոլոր աշխատանքների անհապաղ վերակառուցում։ Յեկող տարվա արտադրական ծրագրի կատարման նախապատրաստական աշխատանքների արագ ծավալումը միայն և բանվոր դասակարգի էլ ավելի բարձր վերելքը կապահովի կուսակցության XVI համագումարի կողմից նշված բոլշևիկյան տեմպերի իրականացումը։

Այս փաստաթղթերը հնգամյակի յերրորդ տարվա սոցիալիստական շինարարության ամեն մի ակտիվ մասնակցողի համար ղեկավար նյութեր պիտի հանդիսանան։

353750

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԸ, ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ԲՈԼՈՐ ՈՒԺԵՐԸ ԳՈՐԾԱԴՐԵՆՔ ԱՐԴՖԻՆՊԼԱՆԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՆԳԱՄՅԱԿԻ 3-ՐԴ ՏԱՐՎԱ ԾՐԱԳԻՐԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ

ԲՈԼՈՐ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ, ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՅԵՎ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մեկ ամսից սկսվում է տնտեսական նոր տարին — հնգամյակի 3-րդ տարին։ Այդ վրա հասնող տարին առաջադրում է մի շարք ամենաբարդ տնտեսական ու քաղաքական պատասխանատու խնդիրներ։ Նա վճռական նշանակություն ունի հնգամյակը չորս տարում կատարելու համար պետք է ապահովի գյուղացիական տնտեսությունների առնվազն կես մասի փոխադրումը սոցիալիստական ուղին, կոլեկտիվացման ուղին։

Հնգամյակի 3-րդ տարին նշանակում է նոր, վիթխարի մի քայլ ԽՍՀՄ-յան ինդուստրացման գործում։ Միմիայն արտադրանքի աճումը, 30—31 տարում, հավասար է լինելու մինչպատերազմյան ամբողջ արտադրության։ Հնգամյակի 3-րդ տարում, արդեն ավարտված և շահագործման յենթարկվելիք Ստալինգրադի տրակտորային գործարանի, Ռոստովի գյուղատնտեսական մեքենաշինության և այլ նոր գործարանների հետ միասին, անհրաժեշտ է

ապահովել շինարարության լիաթափ ընթացքն այնպիսի հսկաների, ինչպիսիքն են՝ Մագնիտոստրոյը, վորի կառուցման վրա մի տարում ծախսվելու յե 200 միլ. ռուբլուց ավելի, Կուզնեցստրոյը, Նիժնի Նովգորոդի ավտոգործարանը, Խարկովի և Զելյաբինսկու տրակտորային գործարանները, Ուրալի ծանր մեքենաշինության գիգանտը և առաջի հերթին քիմիական ամենախոշոր կոմբինատների՝ Բերեզնիկովի ու Բոբրիկովի գործարանները, Սարատովի կոմբայնի գործարանը և այլն։ Հիշյալ գործարանների մեծ մասը, վորոնք իրենց ուժով գերազանցում են մինչև այժմ կառուցված բոլոր գործարաններին, սկսելու յեն աշխատել՝ հնգամյակի 3-րդ տարում՝ մի քանիսը լրիվ, մյուսները առաջին սարքավորմամբ։ Բացի դրանից, առաջիկա տարում սկսվում է այնպիսի նոր գործարանների շինարարությունը, ինչպիսիքն են Նիժնի Տագելի ու Մարիուպոլի մետաղաձուլական գործարանները և Դնեպրոկոմբինատը, վորը բաղկացած է մի շարք խոշորագույն նոր գործարաններից։ 30—31 տարում մենք պետք է՝ XVI համագումարի տված դիրեկտիվների կիրառմամբ՝ հասնենք առաջին խոշոր արդյունքների՝ ԽՍՀՄ-յան մեջ ածխային և մետաղաձուլական նոր բազա ստեղծելու գործում — Ուրալի և Կուզնեցկի կոմբինատը։

Առաջիկա տարվա ծրագիրը վորոշում են հետևյալ վճռական թվերը՝ 7 և կես միլ. տոննա թուջ, 74,5 միլ. տոննա ածուխ, 2,5 միլիարդ ռուբլու նոր մեքենաներ և, բացի դրանից, 845 միլ. ռուբլու գյուղատնտեսական մեքենաներ, 745 հազար ձիու ուժի նոր տրակտորներ։

Ծանր ինդուստրիայի զարգացման հաջողությունները և գյուղատնտեսական հումքային բազայի աճումը (ցանքսի տարածության ընդարձակումը, բամբակի, ճակնդեղի և մի շարք այլ տեխնիկական մշակությունների բերքատվության բարձրացումը) ապահովում են թեթև արդյունաբերության աճման զգալի չափով ավելի բարձր տեմպ, քան նախորդ տարիներում։ Այլ ձեռնարկումների հետ միասին, այդ հանգամանքը նախադրյալներ է ստեղծում բարելավելու լայն գործածության առարկաների հայթայթումը, մեղմելու ապրանքային սովը։

Այդ արտադրական ծրագրի իրագործումը պահանջելու յե վճռաբար բարելավել տնտեսական ամբողջ աշխատանքի վորակը։ Արդյունաբերության աշխատանքի բոլոր վորակական ցուցանիշները, առաջին հերթին ինքնարժեքի և աշխատանքի արտադրականության ցուցանիշները, տարվա ընթացքում պետք է զգալիորեն բարձրացվեն և կատարվեն անշեղ ճշտությամբ։ Առանց դրան՝ չեն կարող ապահովված լինել արտադրության այն ծավալումը և կապիտալ աշխատանքների այն հսկայական պլանը, վոր նշված են 1930—31 տարվա համար։

Արդյունաբերության զարգացման այդ ծրագիրն անխզելիորեն կապված է տրանսպորտի (յերկաթուղային և ջրային) նոր հսկայական անելիքների հետ, առաջադրելով նրան այնպիսի մեծ պահանջներ, վորոնք անկարելի յե կատարել առանց տրանսպորտի ամբողջ կազմակերպության արմատական ու ամենաարագ բարելավման, առանց յերկաթուղային ու ջրային տրանսպորտի բանվորների ամբողջ մասսայի՝ բանվորների ու տեխնիկական կազմի ակտիվ կազմակերպության։

Առաջիկա 1930—31 տարում մենք պետք է ապահովենք նաև գյուղատնտեսության սոցիալիստական՝ խորհ-

տնտեսական ու կոլտնտեսական հատվածի զարգացման բոլշևիկյան տեմպերը, պետք է ապահովենք արտադրական հսկայական ծրագրերի կատարումը այնպիսի կազմակերպություններով, ինչպիսիքն են Զերնոարեստը, Սկատավոդը, Սվինովոդը և ուրիշները, ապահովելով ծավալվող սոցիալիստական շինարարությունը գյուղում, լրիվ իրականացնելով գյուղատնտեսական մեքենաների ու տրակտորների և քիմիական պարարտանյութերի արտադրության գծով տրված առաջադրանքները։

Այդ վիթխարի տնտեսական ամբողջ ծրագրի կատարումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե ամենաակտիվ կերպով և անհապաղ մոբիլիզացիայի յենթարկվեն բանվոր դասակարգի, կուսակցական բոլոր կազմակերպությունների, բոլոր պրոֆմիությունների, ամբողջ կոմսոմոլի և առանց բացառության բոլոր տնտեսական որգանների ուժերը։

Դա չհասկանալը — նույն է թե մոռանալ բոլշևիկյան հիմնական պարտականությունը՝ սոցիալիզմի շինարարության հաջողությունների ամրացման գործում, այդ կազմակերպությունների առաջին հերթին բոլոր ղեկավարների կողմից դա հանդիսանում է հանցագործություն՝ կուսակցության հանդեպ։

Խոսքով ընդունել կուսակցության հիմնական գիծը և գործնականում ժամանակին չձեռնարկել ամենավճռական միջոցներ ամբողջ բանվոր դասակարգը մոբիլիզացիայի յենթարկելու՝ այդ տնտեսական ծրագիրը կատարելու համար — անարժան է բոլշևիկներին և իրենից ներկայացնում է պրակտիկայում գործադրվող աջ ոպորտունիզմի ամենավատ տեսակը։

Միմիայն անհապաղ աշխատանք ծավալելով արդյունաբերության առաջիկա տարվա ծրագրի կատարումը նախապատրաստելու համար, կարելի է ապահովել ինդուստրիայի զարգացման բոլշևիկյան այն տեմպերի իրականացումը, որոն ընդունել է կուսակցության 16-րդ համագումարը։

Առաջիկա տարվա արդիֆինպլանի կատարման կարևորագույն պայմանն է՝ 1929 — 30 տարվա արդիֆինպլանի կատարումը։ Հնգամյակի 3-րդ տարվա արտադրական հսկայական ծրագիրը կատարելու համար բոլշևիկական պատրաստությունը կայանում է նրանում, որ անպայման կատարվի ընթացիկ տարվա արդիֆինպլանը։

Հնգամյակի 2-րդ տարին հանդիսանում է սոցիալիստական ինդուստրիայի ամենախոշոր նվաճումների տարին։ Սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը 10 ամսվա ընթացքում իր ընդհանուր պրոդուկցիան ավելացրել է 27%՝ ամբողջ ռեկոնստրուկտիվ շրջանում ցույց տալով զարգացման ռեկորդային տեմպեր։ Ծանր ինդուստրիան, սոցիալիզմի այդ հիմքը, այդ նույն շրջանում իր արտադրության չափերը ավելացրել է 39,5%։ Կապիտալ շինարարության ծավալը 10 ամսվա ընթացքում կազմում է 2,4 մինչև 2,5 միլիարդ ռուբլու։ Սակայն այդ հաջողություններն ու նվաճումները չպետք է վարագուրեն այն լուրջ ճեղքը, որ տեղի ունեցավ արդյունաբերության մեջ՝ սահմանված պլանի կատարման ընթացքում։

Տաս տարվա ընթացքում արդյունաբերական արտադրանքի աճումը 27 տոկոսով, վկայում է, որ նա խիստ յետ է մնում պլանի սահմանած 32 տոկոս աճումից։ Չի կատարվում վոչ միայն թեթև արդյունաբերության պլանը,

ինչպիսի հանգամանքը հետևանք եր ընթացիք տարում հումույթի վորոշ պակասության, այլև՝ վոր առանձնապես կարևոր է, զգալի չափով թերակատարվում է ծանր ինդուստրիայի արտադրական ծրագիրը։ Վերջին ամիսներին արդյունաբերության աշխատանքի բացահայտ թուլանալը ուղղակի տապալման վտանգ է ստեղծել Կուսակցության և Խորհրդային իշխանության կողմից ընդունված տարեկան արտադրական պլանի համար։ Արդյունաբերության մի շարք ճյուղերում բոլշևիկակյան տեմպերի փոխարեն, վերջին ժամանակներս նկատվում է տեմպերի ամոթաբեր իջեցումն, ինքնահոսի վրա հույս դնելու ոպորտունիստական վերաբերմունք։

Բացահայտորեն անբավարար է նաև հիմնական շինարարության ընթացքը։ Հիմնական շինարարության պլանը առաջին յերեք կվարտալում կատարված է կեսից պակաս։ Հիմնական շինարարության գծով ամոթալիորեն յետ են մնացել առանձնապես Ստրոյոբյեդինյենիեն, Վսեխիմպրոմը, Կոկսոգազոխիմը, Նովոստալը, Մաշինոստրոյեդինիենիեն, Սոյուզսելմաշը։

Հիմնական շինարարության ասպարիզում նկատվող այդ անթույլատրելի յերևույթները սպառնում են արդյունաբերության զարգացման ընդունված տեմպերին և հնգամյակը չորս տարում կատարելուն։

Արդյունաբերության, մանավանդ նրա հիմնական ճյուղերի արտադրական առաջադրանքների թերակատարման կարևորագույն պատճառն է՝ համապատասխան յեռանդի և նախաձեռնության բացակայությունը՝ ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի ասպարիզում, գոյություն ունեցող սարքավորման անբավարար ոգտագործումը, հերթափոխության ցածր կոեֆիցյենտը, ձեռնարկության «նեղ տեղերը» հաղթահարելու յեռանդի բացակայությունը, սարքավորման հաճախակի պարապուրդը՝ նյութական-տեխնիկական հայթայթման անկարգության և կազմակերպված չլինելու պատճառով, սարքավորման բազմաթիվ փչացումները՝ հանցավոր անփութության և տեխնիկական վատ վերահսկողության պատճառով, սիստեմատիկ ռացիոնալացման աշխատանքի բացակայությունը և գործարանի ներքին պլանավորման անբավարար լինելը։ Ձեռնարկության տեխնիկական-արտադրական ղեկավարության մեջ փոխանակ կոնսերվատիզմի դեմ բոլշևիկակյան պայքար մղելու, փոխանակ հեղափոխական զգոնություն ունենալու վնասաբարների նկատմամբ, փոխանակ մոբիլիզացիայի յենթարկելու առաջավոր բանվորների ակտիվությունը՝ ձեռնարկության աշխատանքի ծավալմանը ոժանդակելու համար, — տնտեսավարները հաճախ ընթանում են մասնագետների լճացած մասի, յերբեմն ուղղակի վնասարարների յետևից, պատշաճ աջակցություն չեն ցույց տալիս ինժեներների և տեխնիկների ավելի առաջավոր մասին, կտրվում են բանվորական ակտիվից, այսինքն՝ գործնականում սահմանափակվում են աշխատանքի բյուրոկրատիկ մեթոդներով։

Այդ բոլորի չափազանց բացասական հետևանքները յերևան յեկան նախ և առաջ ընդհանուր և գյուղատնտեսական մեքենաշինության ասպարիզում, ինչպես և սև մետալուրգիայի և ածխարդյունաբերության մեջ։ Այդպես, որինակ, առաջիկա տարում մեքենաշինության ծրագիրը յերկու անգամ ավելացնելու հնարավորությունը ցույց է տալիս, թե վորքան մեծ են մեր ձեռնարկությունների կարողության չոգտագործված ռեզերվները։ Բարձր առա-

ջաղրանքների հաջող կատարումն, որինակ, այնպիսի ձեռնարկությունների կողմից, ինչպես՝ Էլեկտրոզավոդը, Յուժնորուդայի արդյունաբերությունը (Կրիվոյ Ռոգ), հին թղթագործարանները — հետևանք է այն պայքարի, որ մղվում է ձեռնարկության ներքին ռեսուրսները ոգտագործելու համար։ Սակայն այդպիսի որինակները դեռևս շատ քիչ են, իսկ անփութության ու բյուրոկրատիզմի որինակներ՝ արդյունաբերության ներքին ռեսուրսները ոգտագործելու խնդրում՝ հանդիպում են ամեն քայլափոխում։

Իմպորտային սարքավորման բացահայտորեն ուռցրած բազմաթիվ պահանջները, առանց արդյունաբերության ռեսուրսներն ոգտագործելու փորձերի, հանդիսանում են տնտեսական ղեկավարների՝ իրենց պարտականությունների հանդեպ ցուցաբերած բյուրոկրատիկ վերաբերմունքի ամենացայտուն որինակներից մեկը։ Դրանք հաճախ արտացոլում են ոպորտունիստական թերահավատություն դեպի սոցիալիստական ինդուստրիայի հնարավորությունը։ Մինչդեռ սակավադեպ չեն միանգամայն անհիմն այն փորձերը, որով ճգնում են արդարացնել արդյունաբերական առաջադրանքների թերակատարումը ներմուծման անբավարար լինելովը։ Յեթե մեր կուսակցական, արհմիութենական և տնտեսական կազմակերպությունները, մի քանի գործարանների՝ ինչպես Լենինգրադի Ստալինի անվան մետաղագործարանի, որինակով ցուցաբերեին իսկական նախաձեռնություն՝ մեր գործարանների արտադրական ռեսուրսներն ոգտագործելու ասպարիզում, ապա արդյունաբերությունը կստանար լրացուցիչ հնարավորություններ՝ պլանը վոչ միայն կատարելու, այլև զգալիորեն գերակատարելու համար։

Մի շարք դեպքերում, ինչպես նավթարդյունաբերության, Ուրալի հանքարդյունաբերության, գունավոր մետալուրգիայի ասպարիզում, արտադրական պլանը չկատարելու պատճառը հանդիսանում է առաջին հերթին նախապատրաստական աշխատանքների, հետախուզումների, հանքահորերի փորման, բացահայտորեն անբավարար ընթացքը, վորը սպառնում է ինդուստրիայի համապատասխան ճյուղերի հետագա զարգացմանը։ Այդպիսի դրությունը խիստ անթույլատրելի յե, քանի վոր արդյունաբերության այդ ճյուղերը բացառիկ կարևորություն ունեն։ — Այս տարի արդյունաբերության պլանի կատարման համար հատուկ նշանակություն ունեցին տնտեսական պայմաններում կատարված փոփոխությունները, վորոնք առանձնապես յերևան յեկան բանվորական ուժի և նախ և առաջ նրա հոսանության հարցում։ Սոցիալիստական ինդուստրիալիզացիայի հսկայական թափը, դրա շնորհիվ բանվորական բոլոր հին կադրերի և նոր՝ մանավանդ գյուղի բանվորների, հսկայական խավի ներգրավումը արտադրության մեջ և դրա հետ միաժամանակ ծավալված կոլտնտեսական ու խորտնտեսական շինարարությունը, յերբ միևնույն ժամանակ ստացվել է բարձր բերք, խոշորագույն փոփոխություններ մտցրին, համեմատած այն շրջանի հետ, յերբ քաղաքներում դեռ կային համեմատաբար զգալի թվով գործազուրկների կադրեր, իսկ մանր անհատական գյուղացիական տնտեսություններում առանձնապես սուր կերպով զգացվում եյին բանվորական ավելորդ ազատ ձեռքեր։

Պայմանների այդ փոփոխությունները հաշվի չեյին առել տնտեսական որգաններն ու արհմիությունները։ Մինչդեռ դրանց հետ կապված է այն հանգամանքը, վոր, մի

կողմից, արդյունաբերության ասպարեզն են մտնում խոշոր արտադրության դպրոցը չանցած, հաճախ մանր-սեփական-նատիրական, գռփողական տրամադրություններով համակված նոր բանվորներ և, մյուս կողմից՝ այդ բանվորների վորոշ մասը վերադառնում է գյուղ, մանավանդ բերքահավաքի և բերքի բաշխման շրջանում։ Փոխանակ իրոք հաշվի առնելու ստեղծված իրադրությունը, անհրաժեշտ միջոցներ ձեռք առնելու (պրոլետարական հասարակայնությունը զարգացնելու, բանվորների մթերավորման կազմակերպումը համապատասխան կերպով հարմարացնելու, լավագույն արտադրական բանվորներին պարգևատրելու ուղղությամբ և այլն)՝ ամրացնելու համար բանվորական կազմը ձեռնարկություններում, վճռական պայքար մղելու ձեռնարկության համար պատահական գռփողական տարրերի դեմ, տնտեսական որգանները և արհմիությունները, ինչպես և կուսակցական կազմակերպությունները ցուցաբերեցին միանգամայն անթույլատրելի պասսիվություն այդ գործում և դրանով իսկ հնարավորություն տվին զգալիորեն զարգացնելու բանվորական ուժի հոսունությունը։

Առանձնապես պետք է մատնանշել Աշխժողկոմատի որգանների, նաև մի քանի արհմիությունների բյուրոկրատիկ վերաբերմունքը տնտեսական խնդիրներին։ Բավական է ասել, վոր չնայած բանվորների ակնհայտնի պակասությանը ֆաբրիկներում ու գործարաններում, շախտաներում և բոլոր արդյունաբերական ռայոնների շինարարությունների մեջ, — Աշխժողկոմատի որգանները մինչև վերջին ժամանակները սահմանափակվում եյին բյուրոկրատական տպագիր «տվյալներով»՝ հարյուր հազարավոր գործազուրկների մասին և «գործազրկության» համար վճարում եյին մի քանի տասնյակ միլիոն ռուբլի, չպայքարելով այն գռփողական տարրերի դեմ, վորոնք հրաժարվում են աշխատանքից, և այլն։

Վոչ պակաս բյուրոկրատիզմ և նոր խնդիրները լուծելու անշնորհքություն հայտաբերեց սպառողական կոոպերացիան, վորը չկարողացավ անհրաժեշտ չափով վերակառուցել իր աշխատանքը՝ բանվորական կազմն արտադրության մեջ ամրապնդելու խնդիրների համեմատ, չկարողացավ մոբիլիզացիայի յենթարկել իր արտադրական հնարավորությունները՝ բանվորներին մատակարարելու գործը իսկապես բարելավելու, բանվորների և բանվորուհիների մասսայական վերահսկողությունը կոոպերացիայի բոլոր մարմինների աշխատանքների վրա ծավալելու համար։ Այս պատասխանատվությունը վորոշ չափով ընկնում է նաև Առևտրի Ժողկոմատի որգանների վրա։

Տնտեսական մարմինների և արհմիությունների ցրվածության ամենապարզ արտահայտությունը — հոսունության դեմ պայքարելու համար նրանց կողմից ժամանակին միջոցներ ձեռք չառնելը, հոսունություն, վորը խախտում է աշխատանքային դիսցիպլինը և կազմալուծում արտադրությունը, — պետք է համարել տնտեսական նոր հանգամանքների հետևանքով բանվորական ուժի հարցում առաջացած վիճակը «Սայուզուգոլի», Ուրալի ձեռնարկություններում, մի շարք կառուցումների գործում և Նուշնիսկ Մոսկվայի ու Լենինգրադի առանձին ձեռնարկություններում, վորի հետևանքն են յեղել արտադրական ծրագրերի խոշոր ճեղքվածքները։

Տնտեսական աշխատանքների մեջ գլխավոր ու վճռական թերությունը — բանվոր դասակարգի բուռն կերպով աճող

ակտիվությունը կազմակերպելու և գլխավորելու անկարողությունն է։ Չնայած սոցիալիստական մրցության և հարվածայնության վիթխարի թափին՝ ֆաբրիկներում ու գործարաններում, մեր տնտեսական, արհեստակցական, կոմյերիտական ու կուսակցական կազմակերպությունները հաճախ յետ են մնում այս գործում, յերբեմն էլ ոպորտունիստորեն քաշ են գալիս պրոլետարական ակտիվի պոչից (որինակ՝ Սորմովոն և ուրիշները)։

Սոցիալիստական մրցության և հարվածայնության զարգացմանը պակաս չափերով չեն նպաստում արտադրական ծրագրի առաջադրանքները մինչև արհեստանոց, բրիգադ և առանձին դաղդահ հասցնելու։ Մյուս կողմից՝ հարվածայինների արտադրական նվաճումներն ու նրանց ռացիոնալացման նախաձեռնությունը ոգտագործելու, պրոլետարական ակտիվությունը զարգացնելու, ինչպես և գործնական աշխատանքների մեջ բանվորների առաջարկներն իրոք հաշվի առնելու հիման վրա՝ արտադրական ուժի ռեզերվներն ոգտագործելու գործում սոցիալիստական մրցությունն ու հարվածայնությունն անցնում են ավելի բարձր աստիճանի։ Այս հանգամանքն իր արտահայտությունն է գտնում գործարանների և ֆաբրիկների բանվորների կողմից հանդիպական արդիֆինպլան մշակելու մեջ, վորի նշանակությունը—ձեռնարկության միջոցների խոշոր չափերով տնտեսումն է՝ արտադրական ծրագրերը իրագործելիս, արտադրանքի վորակի բարձրացումը և առանձնապես արդյունաբերական շինարարության բոյշևիկյան տեմպերի հետագա արագացումը։ Հանդիպական արդիֆինպլանը հատուկ նշանակություն է ստանում, վորպես բոլոր բանվորներին իրոք սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու

մեթոդ և վորպես հակահեղափոխական ֆնուսարարության դեմ պայքարելու միջոց։

Սակայն, գործնականում, բազմաթիվ դեպքերում կուսակցական և գործարանային այլ կազմակերպությունները վոչ միայն պատշաճ ոժանդակություն չեն ցույց տալիս բանվորների նախաձեռնությանը՝ հանդիպական արդիֆինպլանը մշակելու գործում, այլև բացակայում է սոցիալիստական մրցության պատշաճ կազմակերպումը նրա նորանոր տարբեր ձևերով (փոխադարձ հսկողության բրիգադներ, հասարակական բուկսիր և այլն), իսկ առանց դրան չի կարելի ապահովել ծավալված սոցիալիստական ինդուստրիայի բոյշևիկյան տեմպերը։ Դեռևս կան բազմաթիվ դեպքեր, յերբ կեղծ հարվածայնություն է տեղի ունենում արդյունաբերության մեջ և տրանսպորտում, դեռևս քիչ չեն մրցությանը ձևական, բյուրոկրատական վերաբերմունք ցույց տալու դեպքերը։ Դեռևս քիչ չէ կուսակցության այն անդամների թիվը, վորոնք չեն ըմբռնում կոմունիստների դերն ու պարտականությունները ձեռնարկություններում, վորպես առաջամարտիկներ՝ արդիֆինպլանի կատարման համար մղվող պայքարի մեջ։

Սոցիալիստական կառուցման խսկական առաջավոր դիրքերում գտնվող տնտեսավարների շարքերում դեռևս քիչ չեն այնպիսիները, վորոնք չեն գիտակցում իլենց գործի բացառիկ պատասխանատվությունը, նրանք չեն ըմբռնում, վոր իրենք անպայման պարտավոր են ձեռնարկության մեջ միանձնյա ղեկավարության հաստատ կիրառումը միաձուլել իրենց կարողության հետ՝ ամբողջ աշխատանքների ընթացքում հենվելու կուսակցական, արհեստակցական և կոմյերիտական կազմակերպությունների, բանվոր-

ների և բանվորուհիների ամբողջ կոմունիստական և անկուսակցական ակտիվի վրա։

Սոցիալիստական մրցության և հարվածայնության խոշորագույն թերությունները իրենց արտահայտությունը գտան արտադրության մեջ առաջացած ճեղքվածքներում, վորոնք այս տարվա արդֆինպլանի կատարման համար ամենալուրջ սպառնալիք են հանդիսանում։

Արդյունաբերության մեջ ստեղծված դրությունը պահանջում է վճռական և անհետաձգելի միջոցներ ձեռք առնել մոբիլիզացիայի յենթարկելու ամբողջ կուսակցության, ամբողջ բանվոր դասակարգի ուժերը՝ կատարելու ընթացիկ տարվա համար կուսակցության ընդունած արդյունաբերական պլանը։ Այդ առավել անհրաժեշտ և առավել անհետաձգելի յե այնքան, վորքան արդֆինպլանի մեջ հայտնաբերված ճեղքվածքի վերացումը հանդիսանում է հնգամյակի յերրորդ տարվա արտադրական ծրագրի կատարումն ապահովելու հիմնական պայման։

Դրանից բղխում են կուսակցության և ամբողջ բանվոր դասակարգի հետևյալ հիմնական խնդիրները.

1. Կուսակցական և կոմյերիտական կազմակերպությունների, արհմիությունների և տնտեսական մարմինների բոլոր ուժերը պետք է ուղղել դեպի սոցիալիստական մրցության և հարվածայնության գործի զարգացումը, բանվորների նախաձեռնությանն օժանդակելն այդ գործում իր բոլոր ձևերով (փոխադարձ հսկողության հարվածային բրիգադներ, հասարակական բուկսիր և այլն), բոլոր ուժերն ուղղել դեպի հանդիպական արդֆինպլանի ծավալումը ֆաբրիկներում և գործարաններում, հանքահորերում և

շինարարության մեջ, յերկաթուղու և ջրային տրանսպորտում։

Կենտկոմը ամբողջապես և լիովին կողմնակից է Վեցեեսպեես-ի նախաձեռնության, վորի նպատակն է սեպտեմբերի ընթացքում կազմակերպել արհմիությունների ծավալուն կամպանիա հանդիպական արդֆինպլանի համար, հոկտեմբերի 1-ին համամիութենական «ուդարնիկի օր» կազմակերպելու համար։ Կենտկոմը մատնանշում է, վոր այդ կամպանիայի մեջ բոլոր արհմիութենական կազմակերպություններն անմիջաբար, վոչ թե խոսքով, այլ գործնականապես ներգրավելով միայն—կամպանիան կարող է հանդիսանալ արդյունաբերական պլանի մեջ առաջացած ճեղքվածքների վերացման իսկական միջոց, կարող է ապահովել արտադրական ծրագրի կատարումը։

2. Անմիջապես կիրառել այնպիսի միջոցներ, վորոնք ապահովեյին աշխատանքային դիսցիպլինի վճռական ամրացումը և իսկական պայքարն ընդդեմ ցրվածության, գործալքումների։ Այդ միջոցները պետք է ապահովեն արագ բեկումն աշխատանքի արտադրողականության բարձրացման և տնտեսական ղեկավարության մեջ միավարության սկզբունքի իրականացման գործում, առանց վորի անկարելի յե հաղթահարել արդյունաբերության մեջ առաջացած դժվարությունները։

3. Ապահովել ինժեներների և տեխնիկների արտադրական-տեխնիկական նախաձեռնության զարգացումը և ամեն կերպ արագացնել նոր կադրերի պատրաստումը բանվոր դասակարգից, համարձակ կերպով ու հաստատապես առաջ քաշելով առաջավոր բանվորներին—առանձնապես մրցություն կազմակերպող բանվորներին—տնտեսական պաշտոն-

2—2463

ՀՍՍՌ-Арм-ССР

ների, այս գործում հաղթահարելով անշարժությունը, բյուրոկրատիզմը և ոպորտունիստական անվստահությունը բանվոր դասակարգի ուժերի նկատմամբ։

4. Ձեռնարկություններում հոսունության դեմ պայքարելու նպատակով կիրառել այնպիսի ձեռնարկումների սիստեմ, որն ապահովում է բանվորների ամրապնդումն արտադրության մեջ՝ պրոլետարական հասարակայնությունը համապատասխան ձևով զարգացնելու միջոցով, կիրառելով բանվորների ինքնապարտավորեցում պրոլետարական հասարակայնության հանդեպ՝ տվյալ ձեռնարկության աշխատանքների վերաբերմամբ որոշ ժամանակամիջոցի համար և գործադրելով հասարակական ներգործության ամեն միջոց, մինչև իսկ արտադրության չարամիտ դասալիքներին բոյկոտ հայտարարելը, նմանապես սահմանելով պարգևատրման և մատակարարման զանազան ձևերի սիստեմ, որոնք նպաստում են բանվորների յերկար ժամանակ աշխատելուն տվյալ գործարանում։

Նկատի ունենալով, որ մի շարք որենսդրական նորմեր, առանձնապես աշխատանքի բորսաներում գոյություն ունեցող դրությունը չի համապատասխանում ներկայիս տնտեսական պայմաններին, շտապ կերպով վերաքննել այդ նորմերը այն տեսակետից, որ վերացվի նրանց այն մասը, որ դժվարացնում է պայքարն ընդդեմ հեռացողների, արտադրության դասալիքների և այլն, և դրա հետ միասին ապահովել բանվոր յերիտասարդության, ինչպես և բանվորների և այլ աշխատավորների կանանց լայն ներգրավումն արտադրության մեջ։

5. Բանվորների մատակարարման գործի կազմակերպումը կարևորագույն նշանակություն ունի արդիֆինպլանի

կատարման գործում։ Նպատակ ունենալով բարելավել կոոպերացիայի կողմից բաշխման գործի կազմակերպումը, անհրաժեշտ է ծավալել փորձված ու իրենց արդարացրած այնպիսի ձևեր, որոնք առավելագույն չափով ապահովում են արտադրական բանվորների շահերը (փակ բաշխիչները, բանվոր փայատերերի ամրացումը խանութներին, անողոք պայքար կոոպերատիվ ապարատում կատարվող գողության դեմ, գրքույկների և տալոնների շահագործման դեմ ձեռք առնված միջոցների ուժեղացում և այլն), արդյունաբերական շրջաններում արագացնել մերձքաղաքային տնտեսությունների կազմակերպումը (բանջարանոցային, կաթնատնտեսական, անասնապահական)։ Կուսակցական, արհեստակցական, կոմյերիտական և տնտեսական կազմակերպությունները պետք է ամեն կերպ ոգնություն ցույց տան բանվորների ինքնագործունեության զարգացմանը այդ գործում, ամրացնեն կոոպերացիան, և ամեն կերպ ուժեղացնեն բանվորների և բանվորուհիների մասնայական վերահսկողությունը կոոպերացիայի ապարատի աշխատանքի վրա։

6. Մամուլն ինքնաքննադատության ծավալման հիման վրա մեծ աշխատանք է կատարել բանվորական մասսաների մոբիլիզացիայի և արդիֆինպլանի կատարման գործում։ Դրա հետ միասին, բազմաթիվ դեպքերում սահմանափակվելով մակերեսային կամպանիական ագիտացիայով, մամուլը չի կարողացել պայքարը լարել ընդդեմ տնտեսական աշխատանքի վնասական ու կոնկրետ թերությունների և չի կարողացել լուծել մասսաներին ժամանակին նոր խնդիրների շուրջը կազմակերպելու հարցը, խնդիրներ, որոնք առաջանում են տնտեսական պայմանների փոփոխության հետևանքով։

7. Վճռական պայքար մղել աշխատանքի տեմպի թուլացման դեմ, վորն առաջանում է ամառային արձակուրդների հետևանքով և մի շարք տնտեսական մարմիններում ընդունում է հիմնարկությունն առանց ղեկավարի թողնելու խայտառակ ձևեր և վորը հանդիսանում է հնգամյակի յերրորդ տարվան պատրաստելու համար ընթացիկ արդֆինպլանի կատարման լուրջ խոչնդոտներից մեկը։ Առանց այդ կարգի կազմալուծիչ տրամադրություններն անխնապես և վճռական կերպով արմատախիլ անելու, վորոնք հանդիսանում են ոպորտունիզմի բացահայտ արտահայտություններից մեկը պրակտիկայում,— կուսակցական ուժերի և բանվորների մոբիլիզացիան, արտադրական առաջադրությունների կատարման և ճեղքվածքների վերացման համար, կմնա միայն վորպես խոսք։

Ընթացիկ տարվա արտադրական ծրագիրը և հնգամյակի յերրորդ տարվա տնտեսական պլանը—դրանք սոցիալիստական շինարարության պրակտիկ ծրագիրն են և ծավալուն հարձակումը կապիտալիստական տարրերի վրա ամբողջ ֆրոնտով։ Չնայած արտադրական առաջադրությունների իրականացման մեջ հայտնաբերված խոշոր թերություններին, սոցիալիզմի կառուցումը հաղթականորեն առաջ է գնում, անողոք կերպով խորտակելով իր ճանապարհին դասակարգային թշնամու (կուլակների, հակահեղափոխական վնասարարների, բուրժուական ռեստավրատորների, վորոնց թվում նաև Գրոմանի, Կոնդրատևի, Սուխանովի տիպի մարդկանց) դիմադրության բոլոր փորձերը։ Աջ պանիկյորները, կուլակության այդ թափթփուկները, և տրոցկիստական տարրերը՝ յերեկվա «ձախերը», վորոնք գործնականում դարձել են աջ ոպորտունիստների ձայնակիցներ, ինչպես նաև

աջերի և տրոցկիստների նկատմամբ բոլոր տեսակի հաշտվողականները հանդիսանում են պրոլետարիատի վրա ներգործող բուրժուական ազդեցության արտահայտիչները, այդ պատճառով և այն ամեն տեսակ ոպորտունիստական տրամադրության թափանցումը կուսակցական միջավայրը, վորը խափանում է պրոլետարիատի մարտունակությունը նրա ծավալուն հարձակումների միջոցին կապիտալիստական տարրերի վրա, պետք է բոլշևիկյան վճռական հակահարված ստանա։ Այս հանգամանքը հիմնական նախապայմանն է հանդիսանում սոցիալիզմի հաղթական առաջխաղացման համար, և ապահովելով սոցիալիստական շինարարության բոլշևիկյան տեմպերը, դրանով իսկ հանդիսանում է այդ շինարարության ճանապարհին ընկած դժվարությունների հաղթահարման նախապայմանը։

Մեր առաջ գտնվող դժվարությունների հաղթահարումը նախ և առաջ կախված է մեր աշխատանքից, հետևողական անհաշտ պայքար մղելու մեր կարողությունից ընդդեմ մեր մարմիններում բույն դրած թափթփվածության, բյուրոկրատիզմի, առանձնապես մեր ընդունակությունից՝ կազմակերպելու բանվոր դասակարգին, վորը հանդիսանում է արագորեն աճող, ուղղակի անսպառ աղբյուր հեղափոխական յեռանդի՝ հանուն կոմունիզմի մղվող պայքարում։

Արդֆինպլանը հարվածի տակ է գտնվում։ Հենց դրանով հարվածի տակ է դրվում հնգամյակի յերրորդ տարվա ծրագիրը։ Դրանից հանենք բոլշևիկյան յեզրակացություն։

Կուսակցության բոլոր ուժերը, բանվոր դասակարգի բոլոր ուժերը գործադրեք արդֆինպլանի կատարման, հնգամյակի յերրորդ տարվա ծրագրի ապահովման համար։

ՀԱՄ. Կ. Կ. (բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԵՆԻՆՅԱՆ ԿՍՄՍՈՄՈԼԸ ՊԵՏՔ Է ՀԱՐՎԱԾԱՅԻՆ ՏԵՄՊԵՐԻ ՅԵՎ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԵՐՈՍՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿԸ ԴԱՌՆԱ

ԿՈՄՍՈՄՈԼԻ IX ՀԱՄԱԳՈՒԱՐԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ՅԵՆԹԱՐԿԵԼ ԱՐԴՖԻՆՊԼԱՆՆԵՐՆ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՎՃՌԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ

ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ 1930 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԴԻՐԵԿՏԻՎՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Համ. ԿԿԳԵՄ Կենտկոմի Բյուրոյի 1930 թ. սեպտեմբերի 4 վորոշումը)

Համկոմկուսի (բ) կենտկոմը կոչ արեց ամբողջ բանվոր դասակարգին յերկրորդ տարվա արդֆինպլանների կատարման ճեղքվածքները լիկվիդացիայի յենթարկելու և բոյշևիկորեն դիմավորելու հնգամյակի յերրորդ տարվան։

«Արդֆինպլանը հարվածի տակ է։ Դրանով հարվածի տակ է դրվում հնգամյակի յերրորդ տարվա ծրագիրը։

Բոյշևիկյան նախապատրաստությունը հնգամյակի յերրորդ տարվա արտադրական ծրագիրը իրագործելու համար՝ կայանում է նրանում, վոր անպայմանորեն իրագործվի ընթացիկ տարվա արդֆինպլանը»։

Լենինյան կոմսոմոլը, վորը շատ անգամ է ապացուցել իր հեղափոխական նվիրվածությունը կուսակցության և բանվոր դասակարգին, նաև այս պատասխանատու պահին պետք է հարվածային տեմպի աշխատանքների, աշխատանքային դիսցիպլինի և հեղափոխական հերոսության որինակը դառնա։

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեի դիմումը իրագործումը պետք է դառնա բոյշևիկյան պատվախնդրության գործ, հիմնական, վճռական խնդիրը ամեն մի կոմիտեյի, ամեն մի կոմսոմոլական բջջի, ամեն մի կոմսոմոլիստի և յերիտասարդ բանվորի։

Համ. ԼԿՅԵՄ-յան Կենտրոնական Կոմիտեն Միության բոլոր կազմակերպությունները հայտարարում է մոբիլիզացիայի յենթարկված՝ Համկոմկուսի (բ) Կենտկոմի դիմումը իրագործելու համար։ Դրա համար ամեն մի կոմսոմոլական կազմակերպություն անմիջապես պետք է մարտականորեն վերակազմակերպի իր աշխատանքը։

Ճեղքվածքները արագորեն լիկվիդացիայի յենթարկելու և հնգամյակի յերրորդ վճռական տարվան նախապատրաստվելու հիմնական պայմանը հանդիսանում է՝ կարողանալ գլխավորել մասսաների ակտիվությունը արդֆինպլանի կատարման պայքարի ընթացքում։

Կոմսոմոլը — սոցիալիստական մրցության կազմակերպիչը և նախաձեռնողը, — պետք է նաև առաջիկայում լինի սոցմրցման և հարվածայնության վերելքի նախաձեռնողը և այն բարձրացնի ավելի բարձր աստիճանի վրա՝ հատկապես հանդիպական արդֆինպլանի մասսայական ծավալման գործում։

1. Պարտադրել կոմսոմոլական կազմակերպություններին ծավալել լայն նախապատրաստական աշխա-

տանք «Համամիութենական Ուդարնիկի Որվա» առթիվ. բանվորական ու յերիտ-բանվորների լայն մասսաներին և կոմսոմոլիսաններին ամբողջությամբ քաշել դեպի հարվածային բրիգադները, նրանց աշխատանքը իսկապես որինակելի դարձնելով և ազատվելով կեղծհարվածայիններից։

2. Լավ կոմսոմոլիստ և յերիտ-բանվոր հարվածայիններին գործուղել ցեխի և գործարանի հիմնական, վճռական բնագավառները։

3. Ամբողջ մասսայական աշխատանքը յենթարկել Համ. Կ. Կ. (բ) Կենտկոմի դիմումը կյանքում իրագործելու խնդիրներին, մինչև հոկտեմբերի 1-ը դադարեցնելով այն բոլոր ժողովների և նիստերի հրավիրումը, որոնք կապված չեն այդ խնդիրների իրագործման հետ։

4. Կազմակերպել կոմսոմոլի մասնակցությունը և անմիջականորեն հասցնել մինչև ցեխը, բրիգադը և ամեն մի առանձին բանվորին—սեպտեմբեր ամսվա ամենորյա աշխատանքի արտադրության չափի նորման՝ տնտեսական տարվա մնացած որերի համար, որ անհրաժեշտ է տարեկան արդիինպլանի ամբողջական իրագործման համար։

Առաջարկել բոլոր ֆաբրիկա-գործարանային և տրանսպորտի բջիջներին ամեն մի կոմսոմոլիստի համար նշանակել աշխատանքի արտադրության բարձրացման տոկոս սեպտեմբեր ամսվա համար, կոչ անելով այդ խնդիրն իրագործելու նաև ամբողջ յերիտասարդ բանվորությանը։ Կազմակերպել ամենորյա հասարակական հսկողություն ստուգելու արտադրական առաջադրանքների իրագործումը։

5. Կազմել ամեն ձեռնարկում և ամեն ցեխում պլանա-ոպերատիվային խմբեր, նրանց հիմնական խնդիրը համարելով վերացնել ցեխային, միջցեխային և ըստ գործարանային պլանի նախատեսված մատակարարման թերությունները։ Այդ խմբերի աշխատանքներին քաշել Գիտության և Տեխնիկայի Աշխատավորների Համամիութենական Ասոցիացիայի մասնագետներին և ինժեներա-տեխնիկական սեկցիաներին։

6. Լայն աշխատանք ծավալել տարածելու բանվորների և յերիտասարդ բանվորների հեղափոխական նախաձեռնությունը՝ ստանձնելու ինքնապարտականություն գործարանում մնալու և իր աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար։ Մոտ որերում ինքնապարտականությամբ ներգրավել կոմսոմոլիստներին և յերիտասարդ բանվորներին։

7. Ստեղծել ընդհանուր անհանգուրժողական վերաբերմունք դեպի գործարանից գործարան փոխադրվողները, գլխողները, պրագուլգչիկները, ծույլերը, կեղծ-հարվածայինները,—սահմանելով սև տախտակներ, հասարակական-ցուցադրական դատեր, և ձեռք առնել հասարակական ներգործության այլ միջոցներ, մինչև հասարակական բոյկոտը։

8. Մոբիլիզացիայի յենթարկել թեթև հեծելազորը՝ ստուգելու համար բանվորների առաջարկների իրագործումը, գյուտարարությունը և տնտորդանների աշխատանքները՝ պլանավորման, կահավորման ոգտագործման խնդրում, և այն, թե տնտորդանները արդյոք փնտրել են հնարավորություններ ներմուծվող (իմպորտային) կահավորումը փոխարինելու ներքին միջոցների ոգտագործումով, ինչպես նաև մատակարարման գործում։

9. Ամեն կերպ ուժեղացնել վորակավորված կադրերի պատրաստումը լիկվիդացիայի յենթարկելով ճեղքվածքները

ֆաբգործուսների հիմնական շինարարության մեջ։ Կատարել ֆաբգործուսների աշնանային հավաքը, լայնորեն տարածել պատանի բանվորության դպրոցների, կուրսերի և կրուժոկների ցանց, վոր բարձրացնի վորակը և յերիտասարդ բանվորությանը առաջ մղի ավելի վորակյալ աշխատանքների։

10. Սեպտեմբերի 30-ին վերջացնել 30.000 կոմսոմոլիստների մոբիլիզացիան Դոնբաս ուղարկելու համար։

11. Բոլոր կոմսոմոլիստական կազմակերպությունները պետք է ձեռք առնեն միջոցներ ժամանակին կատարելու Մագնիտոստրոյի, Դնեպրոստրոյի, և Կուզնեցկստրոյի համար պատվերները՝ սերտ կապ ստեղծելով այդ շինարարությունների կոմսոմոլիստական կազմակերպությունների հետ։

12. Կազմակերպել պիոներների և աշխատավորության յերեխաների մասսայական յելույթներ ձեռնարկներում և բանվորական ավաններում՝ արդիինպլանի համար մղվող պայքարի ընթացքի հետևանքների մասին։

13. Պարտադրել ամբողջ կոմսոմոլիստական մամուլին տալ ամենորյա տեղեկագրեր ճեղքվածքների դեմ մղվող պայքարի մասին, ցույց տալով արդիինպլանի համար մղվող պայքարի լավ որինակները, անխնայորեն հարվածելով յետ մնացողներին, դանդաղողներին և արդիինպլանի իրագործումը խանգարողներին։

14. Ճիշտ այնպես ինչպես ֆաբրիկա-գործարանային կազմակերպություններն են մոբիլիզացիայի յենթարկում իրենց բոլոր ուժերը արդիինպլանի կատարման համար, — այնպես ել գյուղական կազմակերպությունները պետք է կենտրոնացնեն կոմսոմոլիստական, բատրակա-չքավորական և միջակային յերիտասարդական մասսայի բոլոր ջանքերը

հացամթերման պլանը իրականացնելու, աշնանացանքի տարածությունները լայնացնելու վրա և ուժեղացնելու կոլեկտիվացման և խորհ. տնտեսությունների շինարարության թափը։

15. Կոմսոմոլիստներից կազմակերպել կոոպերատիվ խմբակներ, վորոնք պիտի ոգնեն կոոպերացիային արագ թափով կազմակերպելու փակ բաշխումը, ամրացնելով բանվոր-փայատերերին խանութներին և այլն։ Պարտադրել թեթև հեծելազորի ջոկատներին ստուգել բոլոր կոոպերատիվ որգանների աշխատանքները՝ Համ. Կ. Կ. (բ) Կենտկոմի դիմումով նրանց վրա դրված պարտականությունների իրականացման գործում։

16. Բոլոր յերկրային, շրջանային և ազգային հանրապետությունների կենտկոմները և ռայոնական կոմիտեները պետք է անմիջապես մոբիլիզացիայի յենթարկեն ապարատի վոչ պակաս քան կեսը և ակտիվը, դրանց ուղարկելով հիմնական, վճռական բնագավառները՝ ոգնելու գործարանային բջիջներին, կազմակերպելով պայքարը ճեղքվածքների դեմ և իրագործելու արդիինպլանը։

17. Առաջիկա հոկտեմբերի 4-ին լրանում է Լենինի՝ Համ. Լենկոմյերիտմիության III համագումարում արտասանած ճառի 10-րդ տարին։ Այդ որը պետք է նշանակալից դարձնել Համ. Լենկոմյերիտմիության բոլոր կազմակերպությունների ռապորտով (զեկույցով) Կենտկոմի այս վորոշման իրագործման արդյունքների մասին։

18. Լենկոմյերիտմիության IX համամիութենական համագումարին նախապատրաստվելը յենթարկել ընթացիք տնտեսական տարվա արդիինպլանն իրագործելու վճռական պայքարի խնդիրներին և կոմսոմոլիստական ու յերիտ.

բանվորական մասսայի կողմից հնգամյակի յերրորդ տարվա ինդուստրացման բոյլշևիկորեն տեմպերը յուրացնելուն։

Համ. Կ. Կ. (բ) Կենտկոմի դիրեկտիվների հաջող իրագործումը անհնար է առանց վճռական պայքարի ընդդեմ ոպորտունիզմի, հատկապես աջ թեքման դեմ, որը տարածում է թերահավատություն դեպի բանվոր դասակարգի ուժերը և «թուլացնում է պրոլետարիատի մարտունակությունը, նրա՝ կապիտալիստական տարրերի դեմ ծավալած հարձակման գործում»։

Գտնելով, որ արդիականացման համար մղվող պայքարը հանդիսանում է ամեն մի կոմունիստի և ամեն մի կազմակերպության մարտական ստուգումը՝ իր դասակարգին և կուսակցությանը նվիրված լինելու մասին,—բոլորը, ովքեր անհրաժեշտ միջոցները ձեռք չեն առնի մոբիլիզացիայի յենթարկելու արդիականացման կատարման համար,—պետք է դիտվեն իբրև դասալիքներ՝ սոցիալիստական շինարարության ֆրոնտից։

ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԴԻՄԱՎՈՐՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՎԵՑԵԵՍՊԵԵՍԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Վերջանում է հնգամյակի յերրորդ տարին, մեծ բեկման տարին, մի բեկումն, որ առաջ բերեց բանվորական մասսաների աշխատանքային վերելքի ուժեղ հոսանք. այդ մասսաները գործնականում իրականացրին իրենց լոզունգը — «հնգամյակը չորս տարում»։

Սոցիալիստական արդյունաբերության զարգացման գործում տեղի ունեցած խոշոր հաջողությունների հետ մեկտեղ, որ ձեռք են բերված ընթացիկ տնտեսական տարում, Վեցեեսպեեսի նախագահությունը նշում է, որ ընթացիկ տարվա արդիականացման ընթացքում յերևան յեկան մի շարք լուրջ ճեղքվածներ, որոնք վտանգ են սպառնում՝ տնտեսական տարին հաջողությամբ ավարտելուն և հնգամյակի յերրորդ տարում ինդուստրացման բոյլշևիկյան տեմպերի կատարմանը։ Այդ ճեղքվածքների գլխավոր պատճառը Վեցեեսպեեսի նախագահությունը համարում է՝ բանվոր դասակարգի աշխատանքային աճող վերելքը գլխավորելու ու կազմակերպելու անկարողությունը։

Մինչդեռ ծավալվող սոցիալիստական մրցության և հարվածայնության ընթացքում, որ ապահովում են բան-

վոր դասակարգի վճռական հաջողությունները սոցիալիստական շինարարության հիմնական բնագավառներում, մասսաների նախաձեռնությամբ առաջ են քաշված և փորձով ստուգված են արդիականացման և գերակատարման համար մղվող պայքարի կոնկրետ ձևեր (հասարակական բուքսիր, ստուգող հարվածային բրիգադներ և այլն)։

Նոր խոշորագույն քայլը—վոր ապահովում է բազմամիլիոն մասսաների անմիջական մասնակցությունը սոցիալիստական շինարարության մեջ—կազմում է հանդիպական արդիականացումը։

Բանվորական մասսաների առաջ քաշած հանդիպական արդիականացումը՝ ի պատասխան արդյունաբերության առանձին ճյուղերում տեղի ունեցած ճեղքվածքների,—սոցիալիստական մրցության վերելքը դնում է բարձրագույն աստիճանի վրա, ապահովում է սոցիալիստական շինարարության բոլոր ռեզերվների և արտադրական հնարավորությունների մաքսիմալ հայտաբերումն ու ոգտագործումն, խփում է վնասարարության արմատներին և հանդիսանում է լավագույն պատասխանը բոլոր պանիկյորներին ու ոպորտունիստներին։

Ընթացիկ տարվա արդիականացման գործում տեղի ունեցած ճեղքվածքները վերացնելու համար բանվոր դասակարգի բոլոր ուժերը մոբիլիզացիայի յենթարկելու նպատակով, սոցիալիստական մրցության անպայման բոլոր ձևերը մաքսիմալ չափով ոգտագործելու համար, և վորպեսզի բանվորական մասսաները ամենալավ կերպով պատրաստվեն կազմակերպված ձևով դիմավորելու հնգամյակի յերրորդ վճռական տարվան,—Վեցերեսպեսի նախագահությունը վորոշում է.

1. Հնգամյակի յերրորդ տարվանը դիմավորել՝ 1930 թ. հոկտ. 1-ին սահմանելով Ուդարնիկի Համամիութենական Որ։ Ուդարնիկի Համամիութենական Որը, վոր կազմակերպվելու յե բոլոր ֆաբրիկներում, գործարաններում, շախտաներում, տրանսպորտում, հիմնարկություններում, կոոպերացիայում, սովխոզներում և կոլխոզներում,—պիտի ընթանա՝ մասսաները լայնորեն մոբիլիզացիայի յենթարկելու նշանի տակ՝ հնգամյակի յերկրորդ տարին հաջողությամբ ավարտելու համար, աշխատանքի վորակը լավացնելու համար, վճռական պայքար մղելով աշխատանքային ցրվածության մնացորդների դեմ, հոսունության դեմ, դեզորգանիզացիայի դեմ՝ վոր դժվարացնում են հնգամյակի յերրորդ տարվա համար ծավալուն պատրաստվելուն. պայքարել՝ վճռական բեկումն առաջ բերելու կոոպերատիվային և մատակարարողական որգանների աշխատանքում և ուժեղացնելու պրոֆմիությունների ակտիվությունը՝ բանվորական մատակարարման գործի լավագույն կազմակերպման խնդրում։

2. Ուդարնիկի Համամիութենական Որը, լինելով աշխատավորության ակտիվության ընդհանուր մոբիլիզացիայի որ՝ լայն բանվորական մասսաների անմիջական մասնակցությամբ մշակված հնգամյակի յերրորդ տարվա արդիականացումը (հանդիպական արդիականացումը) լրիվ կատարելու համար,—պետք է առաջ բերի բանվոր դասակարգերի ջոկատների նոր հոսանք՝ հարվածային շարժման մեջ (հնգամյակի յերրորդ տարվա ուդարնիկների կոչը), պետք է ամրապնդե և ամեն մի ձեռնարկության սեփականություն դարձնե մասսաների փորձով ստուգված՝ սոցիալիստական մրցության նոր, բարձրագույն ձևերը (հասարակական բուկսիր,

41 31.926

ստուգիչ բրիգադներ և այլն), պետք է [illegible]
մանագրերի մասսայորեն կնքումն՝ բրիգադների միջև, հա
քարութիւնների (ցեխերի) և ձեռնարկութիւնների մի
սոցմրցութեան վերաբերեալ — այն նոր ցուցանիշների հ
ման վրա, որ բղխում են հանդիպական արդիինպլանի
պետք է նաև պարգևատրել այն լավագույն ձեռնարկո
թիւններին և ուդարնիկներին, որոնք հաջողութեամբ
կատարել հնգամյակի յերկրորդ տարվա արդիինպլանը։

3. Վեցեեսպեեսի նախագահությունը ընդգծում
որ սեպտեմբերը պետք է մաքսիմալ չափով ոգտ
գործվի միության բոլոր կազմակերպությունների կողմ
վճռական կերպով վոտքի կանգնեցնելու համար արդի
պլանի կատարման գործում յետ մնացած ձեռնարկո
թիւններին, ցեխերին, բրիգադներին, — մանավանդ ածուխ
մետաղի և տրանսպորտի գծով, — կազմակերպելով հա
բակական բուքսիր, ստուգիչ բրիգադներ, ձեռնարկութիւ
ների մեջ ծավալելով բանվորական առաջարկությունների
գյուտարարությունների հավաքումն և իրացումն և այլն

Վեցեեսպեեսի նախագահությունը կոչ
անում բանվորներին, ինժեներական-տեխն
իական ծառայողներին և բոլոր աշխատավո
ներին՝ լարել բոլոր ուժերը հաջողությա
ավարտելու հնգամյակի յերկրորդ տարին և պա
բաստվելու նոր տնտեսական տարվա համա

Главлит А—77152 Заказ № 2468 Тираж 15.000
Книжная ф-ка Центриздата Народ
Шлюзовая набереж

ՀՀ Ազգային գրադարան
NL0207474